ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«24» «հունիսի» 2026 թվական № 205-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 140-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով 2026 թվականի հունիսի 11-ի շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործադիր մարմնի նախաձեռնությամբ շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհրդի նիստի N7 արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մայիսի 14-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 140-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) հրամանի հավելվածի 19-րդ կետի 2-րդ նախադասությունում «հինգ» բառը փոխարինել «ութ» բառով,
   2) հրամանի հավելվածի 20-րդ կետի 12-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝

   «12) ազգային պարկի կողմից վարձակալության կամ օգտագործման իրավունքով հանձնվող գույքի, այդ թվում՝ հողամասի նվազագույն վարձավճարների, ինչպես նաև հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց նվազագույն վճարների չափերի հաստատումը.»:

2. Շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի 1-ին կետով նախատեսված փոփոխությունների պետական գրանցումը:

6/24/2026

X

ԱՐԱՄ ՄԵՅՄԱՐՅԱՆ

Signed by: MEYMARYAN ARAM 2412830247

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա. ՄԵՅՄԱՐՅԱՆ

ք. Երևան